ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

< 25 > հունվարի 2016թ. N 5-Ա

ԱՐԱ ՀԱՅԿԱԶՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 161-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշմամբ սահմանված ամենամյա լրացուցիչ արձակուրդի տրամադրման կարգի 3-րդ կետի դրույթները և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի N 1797-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրության 23-րդ կետի «ե» ենթակետը՝

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Արա Հայկազյանին տրամադրել 2016 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդը՝ 2016 թվականի փետրվարի 1-ից մինչև մարտի 3-ը ներառյալ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունները ժամանակավորապես դնել ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Միեր Կյուրեղյանի վրա:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:
4. Աշխատանքի մեջ համարել 2016 թվականի մարտի 4-ին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ